Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

10337

С-А 32-К / 146

[illegible] ՅԵՐԿԿՈՄԻ
ՅԵՐԿՐՈՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ

*ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ*

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

ԸՍՏ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ

ԸՆԿԵՐՆԵՐ ՎԵՐՇԿՈՎԻ
ԳՐՈՒԲՄԱՆԻ
ԴԱԼԱԿԻՇՎԻԼՈՒ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

3КСМ2(47.92)
Z-21

ԶԱԿԿՆԻԳԱ
1931

ЗКСМ2(47.925)
Z-21

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յեր.
1. ընկ. Վերշկովի զեկուցումը . . . . . . . 3
2. ընկ. Գրոսմանի զեկուցումը . . . . . . . 19
3. ընկ. Դալակիշվիլու զեկուցումը . . . . . 31

---

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Ֆ. Մյասնիկյանի անվան տպ. հրատ. «Զարյա Վոստոկա»-ի
...ո 2797 Գլավլիտ 1874 Քանակ 400

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
24 SEP 2006
31 DEC 2009

# ԸՍՏ ԸՆԿ. ՎԵՐՇԿՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՀԼԿՅԵՄ ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## I

ՀԼԿՅԵՄ Անդրյերկկոմի յերկրորդ պլենումը ՀԼԿՅԵՄ Անդրյերկկոմի Բյուրոյի քաղաքական գիծը համարում ե ճիշտ և աշխատանքը բավարար:

Հաշվետվության ժամանակաշրջանը համընկնում ե Անդրկովկասյան Ֆեդերացիայի տնտեսա-քաղաքական ամրապնդման ետապը: Այդ ժամանակաշրջանի ընթացքում յերկրում տեղի յեն ունեցել խոշոր սոցիալ-տնտեսական առաջընթացումներ՝ խորհտնտեսությունների և Մեք. Տրակտ. Կայանների սոցիալիստական արդյունաբերության ամրապնդման ու աճման, ԱՍՖԽՀ՝ կոլտնտեսությունների կողմից 36,7 տոկոս միանձնյա, չքավոր-միջակ գյուղացիական տնտեսությունների ընդգրկումի հիման վրա:

Այդ առաջընթացումներն ապահովեցին բանվորների և աշխատավոր գյուղացիության նյութական բարորության բարձրացումը և ե՛լ ավելի ամրապնդեցին պրոլետարիատի դիկտատուրան, վորը՝ կուսակցության ղեկավարության ներքո՝ իրականացրեց ծավալուն սոցիալիստական հարձակումը վողջ ճակատով:

Անգրագիտության լիկվիդացիայի և համըուսուցման գործադրության վերաբերմամբ ձեռք են բերված վճռական հաջողություններ 1931 թվականի պլանների

10 1 JUN 2013

10337

իրագործման մեջ, ձեռք են բերված հաջողություններ նաև հիմնական ազգություններից կադրեր պատրաստելու բնագավառում:

Այդ հաջողությունները ձեռք են բերված՝ աջ օպորտունիզմի, վորպես գլխավոր վտանգի, «ձախի» և հաշտվողականության դեմ մղվող վճռական կռվի մեջ կուսակցության գլխավոր գծի գործադրության հիման վրա, հակառակ դասակարգային թշնամու և նրա իդեոլոգների — մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների կատաղի ընդդիմադրության: Անդրկովկասի կոմյերիտմիութենական կազմակերպությունների՝ դասակարգային թշնամու և կոմյերիտմիության շարքերում յեղած նրա գործակալության, աջ և «ձախ» օպորտունիստների դեմ՝ կուսակցության շարքերում յեղած նրա գործակալության, սոցշինարարության խնդիրների լուծման մեջ կոմյերիտմիության դերի բարձրացման համար մղվող կռվի վողջ պրակտիկան հանդիսանում է կոմյերիտմիության դասակարգային անվտանգության լավագույն ապացույցը: Կոմյերիտմիության բոլոր կազմակերպությունների անելիքը լինելու յե՝ հետագայում ևս վճռական կռիվ մղել դասակարգային թշնամու և կուսակցության ու կոմյերիտմիության շարքերում յեղած նրա գործակալների դեմ, աջ օպորտունիզմի, վորպես գլխավոր վտանգի դեմ, «ձախ» յերկերեսանության և կուսակցության գծի հանդեպ ցույց տրվող թեքումների նկատմամբ հաշտվողականության դեմ: Միաժամանակ կռիվ մղել ազգային թեքումների ու մեծապետական շովինիզմի դեմ, վորը հանդիսանում է գլխավոր վտանգը ազգային հարցում և տեղական նացիոնալիզմի դեմ, վորը ջուր է ածում իմպերիալիստների ջրաղացին, ամրապնդելով ու զարգացնելով աշխատանքը կոմյերիտականների մասսաների և աշխատավոր յերիտասարդության ինտերնացիոնալական դաստիարակության վերաբերմամբ:



ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
56650-66

## II.

Պլենումը հավատում է, վոր արդյունաբերության արդֆինպլանի իրագործման համար մղվող կռվում յերկրի կոմյերիտմիութենական կազմակերպությունը ցույց է տվել կուսակցությանը նշանակալից ոգնություն՝ ամենից առաջ՝ սոցմրցակցության և հարվածայնության մեջ 100 տոկոսով կոմյերիտականների ներգրավման մասին ՀԼԿՅԵՄ-ի IX համագումարի վճիռը եյապես իրագործելու հիման վրա:

Կոմյերիտմիութենական հարվածային բրիգադները, վորողները, ցեխերը, կոլյուսներն ու գործարանները, վորպես կանոն, իրագործում են և գերակատարում պլանները:

Արդյունագործության կոմյերիտմիությունը, մասնակցելով աշխատանքի արտադրողականության բարձրացման համար մղվող կռվում, ցուցադրելով հարվածային աշխատանքի որինակներ, տիրապետում է ավելի բարդ, վորակապես ավելի բարձր խնդիրների, վորպիսիք են՝ ռացիոնալիզացիան, նոր տեխնիկայի տիրապետումը և այլն:

Բայց և այնպես՝ առաջին կիսամյակի ընթացքում արդյունագործության կողմից պլանի թերիրագործումը վկայում է այն, վոր արդյունագործության կոմյերիտմիութենական կազմակերպությունները, չնայած ձեռք բերված հաջողություններին, չեն կարողացել դեռ ևս լիովին վերակարգավորել իրենց աշխատանքը՝ համապատասխան հնգամյակի 3-րդ վճռական տարվա խնդիրների:

Կոմյերիտմիության բոլոր կազմակերպությունների մարտական խնդիրն է՝ կռվել յերկրորդ կիսամյակի արդֆինպլանի իրագործման և գերակատարման համար: Յուրաքանչյուր կազմակերպություն պետք է ձեռք բերի իր աշխատանքի բոլշևիկյան տեմպեր բոլոր բնագավառներում և աշխատանքի վերակառուց-

ման գործում՝ համապատասխան ընկ. Ստալինի՝ անտեսավարների խորհրդակցության ժամանակ առաջադրած ճառի մեջ դրված նոր խնդիրների, մի բան, որ կապահովի կոմյերիտմիության աշխատանքի վերելքը դեպի ավելի բարձր աստիճան արդյունաբերության մեջ:

Ամենակարճ ժամկետում սոցմրցակցությամբ և հարվածայնությամբ ընդգրկել կոմյերիտականներին և բանվոր յերիտասարդությանը 100 տոկոսով, մղելով վճռական կռիվ կեղծ — հարվածայնության և վայրափոխիկների դեմ:

Բարձրացնել հարվածային շարժման որակը, կազմակերպելով հարվածային բրիգադներ՝ իրագործելու համար ոչ միայն քանակական, այլև որակական ցուցանիշեր: Ջանալ, որպեսզի հարվածային բրիգադները հանդիսանան ձեռնարկությունների՝ իբրև տնտեսահաշվարկին (хозрасчет) անցնելու առաջամարտիկներ, ակտիվ կերպով մասնակցեն ռացիոնալիզացիայի պլանավորման մեջ, ընթանան տեխնիկայի տիրապետման համար մղվող կռվի առաջին շարքերում, ոգնեն հետ մնացողներին, տան իրենց աշխատանքի փորձը և պատրաստեն կադրեր՝ սոցիալիստական արդյունաբերության մյուս բնագավառները փոխադրելու համար:

Հաշվարկը և սոցմրցակցության ու հարվածայնության ղեկավարությունը անհրաժեշտ է դնել առաջին տեղերից մեկը, վճռականորեն կռվելով հարվածային շարժման դիմազրկության դեմ, տանելով սոցմրցակցությունն ու հարվածայնությունը նրանց կոնկրետացման ճամբով (միատեսակ խմբերի, միատեսակ կայանքների մրցակցություն և այլն):

Կոմյերիտմիութենական կազմակերպությունների անելիքը լինելու յե — ամրապնդել պլանային — գործառնական խմբերի աշխատանքի ղեկավարությունը, կազմակերպելով ու գլխավորելով հանդիպական արդֆինպլանները, մղելով վճռական կռիվ տեղի ունեցող նրանց թերագնահատման դեմ:



Նշելով կոմյերիտմիության անբավարար աշխատանքը նոր — կառուցումների մեջ, Պլենումը պարտավորեցնում է բոլոր կազմակերպություններին ձեռք բերել վճռական բեկումն նոր-կառուցումների աշխատանքի մեջ, կազմակերպելով մասսաներին շինարարության մասնանշված պլանների իրագործման համար, ապահովելով շինարարությունը հիմնական ազգությունների յերիտասարդությունից վերցված բանվորական կադրերով, ստեղծելով նրանից պրոլետարիատի լայն կադրեր:

Պլենումը, նշելով կոմյերիտմիութենական կազմակերպությունների կենդանի աշխատանքները տրանսպորտի վրա, անթույլատրելի յե համարում՝ տրանսպորտի աշխատանքի մեջ ձեռք բերված առաջին նվաճումների հիման վրա վերջին ժամանակներս արտահայտվող անդորրության տրամադրությունը:

Պլենումը պարտավորեցնում է տրանսպորտի բոլոր կոմյերիտմիութենական կազմակերպություններին մոբիլիզացիայի յենթարկել իրենց բոլոր ուժերը՝ ՀԿԿ (բ) Կենտկոմի Պլենումի ՀԿԿ (բ) Անդրյերկկոմի վճիռների իրագործման համար:

Պլենումն առանձնապես ընդգծում է աշնանա-ձմեռային փոխադրումների մարտական կիրառման խնդիրը:

Պլենումը հանձնարարում է Ցերկը. Կոմխուսյի Բյուրոյին ամենամոտ ապագայում ստուգել կոմյերիտական կազմակերպությունների մասնակցությունը ծովային ու գետային տրանսպորտի վերաբերմամբ ՀԿԿ (բ) Կենտկոմի և ՍԽՀՄ Ժողկոմխորհի արած դիմումի իրագործման մեջ:

## III.

Անդրկովկասի կոմյերիտմիութենական կազմակերպությունը, կուսակցության գլխավոր գծի գործադրության հիման վրա, վճռականորեն կռվելով կուլակության դեմ, մղելով անհաշտ կռիվ ինքնահոսի վերաբերմամբ աջ օպորտունիստական հոսանքի և «ձախ» շեղումների դեմ կոլտնտեսային շարժման մեջ, ակտիվ մասնակցություն ցույց տալով չքավորության և բատրակության հետ տարվող աշխատանքի կազմակերպման մեջ, Մեք. Տրաք. Կայանների, խորհտնտեսությունների և գոյություն ունեցող կոլտնտեսությունների ամրապնդման ու զարգացման մեջ, ցույց է տվել կուսակցությանը մեծ օգնություն գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

Գարնանացանի պլանների իրագործման և գերակատարման համար մղված կռվի մեջ Անդրկովկասի կոմյերիտմիությունը նշանակալից օգնություն է ցույց տվել կուսակցությանը: Դրա հետ մեկտեղ Պլենումը նշում է, որ կոմյերիտմիության Ցերկրային կազմակերպությունը մշակման — քաղհանի կամպանիայի գործադրության մեջ աշխատել է անբավարար:

Պլենումը հավաստում է, որ կոմյերիտմիության գյուղական կազմակերպությունները հիմնականում անցել են կոլտնտեսային շինարարության խնդիրների լուծմանը, բայց և այնպես՝ վորակապես ավելի բարդ խնդիրները— գործավարձույթը (сдельщина), աշխատանքի հաշվարկը, բանվորների ուժերի դասավորումը և այլն — դանդաղ են տիրապետվում կոմյերիտմիութենական կազմակերպությունների կողմից:

Կոմյերիտմիության մի շարք գյուղական բջիջներ բավականաչափ հետևողականորեն կռիվ չեն մղել կուլակության ու նրա իդեոլոգների — մենշևիկների, դաշնակների և մուսավաթիականների դեմ, թույլ օգնություն են ցույց տվել կուսակցությանը՝ բատրակության և չքավորության հետ տարվող աշխատանքի մեջ, դեռ չեն ապահովել գործնականում կուսակցության և կոմյերիտմիության հիմնական լոզունգների կիրառումը և աջ օպորտունիստական սխալների ու «ձախ» թեքումների շտկումը իր ժամանակին: Կոմյերիտմիության գյուղական կազմակերպությունների առանձին օղակներ գործել են աջ և «ձախ» սխալներ:

Մի շարք ռայոններում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում գյուղական ւջիջների դերը տակավին չափազանց աննշան է:

Կոմյերիտմիության գյուղական կազմակերպության կարևորագույն խնդիրները հանդիսանում են՝ տեխնիկական կուլտուրաների առաջիկա հնձի կամպանիան, բերքի ու յեկամուտների բաշխման ապահովումը՝ գործադրված աշխատանքի քանակության ու վորակի հիման վրա և աշնանացանի կատարումը: Անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել՝ գործավարձույթի կիրառման, մշակման ճիշտ նորմաներ սահմանելու և բանվորական ուժի ճիշտ դասավորման գընահատության, կնոջ աշխատանքի լայն կիրառման, աշխատանքի հաշվարկի, իր ժամանակին պլաններ կազմելու, վերջիններս բանվորներին հասցնելու և մեքենաները լավ օգտագործելու ապահովման վրա:

Պլենումը կոմյերիտմիության բոլոր կազմակերպությունների հատուկ ուշադրությունը դարձնում է բամբակահավաքի և բամբակամթերման վերաբերմամբ ՀԿԿ (բ) Անդրյերկկոմի Պլենումի դրած խնդիրների իրագործման վրա:

Վճռականորեն կռվելով ինքնահոսի վերաբերմամբ աջ-օպորտունիստական հոսանքի և «ձախ» շեղումների դեմ, վոչ մի դեպքում թույլ չտալով, որ կոլտնտեսությունների մեջ գյուղացիների ներգրավման համար մղվող «կռիվը դառնա կոլեկտի-

վացման միջոցն տակոսների հիմնադրին հետապնդում, ամրապնդելով կոլեկտիվացման բնագավառում ձեռք բերված նվաճումները և զարգացնելով ուժեղ աշխատանք կոլտնտեսությունների կազմակերպչական – տնտեսական ամրապնդման վերաբերմամբ, կոմյերիտմիութենական 11 կազմակերպությունները պետք է, այդ հիման վրա, ծավալեն լայն մասսայական բացատրական աշխատանք մենատնտեսավար, բատրակ, չքավոր ու միջակ գյուղացիների շրջանում՝ կոլտնտեսության մեջ նրանց ներգրավելու համար այն հաշվով, որ բամբակի ռայոններում եյապես ավարտեն կոլեկտիվացումը 1932 թվականին:

Գյուղում կոմյերիտմիության աշխատանքի հետագա վերակառուցումը պետք է ընթանա ամենից առաջ կոլտնտեսային շինարարության վճռական բնագավառների տիրապետման գծով, «անհրաժեշտ է ջանալ, որպեսզի կոմյերիտմիությունը այնտեղ, ուր դոյություն չունեն կուսակցական բջիջներ, լայն չափով խորամուխ լինի խորհրդային, կոոպերատիվային, կոլտնտեսային ղեկավար աշխատանքի հարցերի մեջ»: Մոտ ժամանակներում ստեղծել կոմյերիտմիութենական բջիջներ յուրաքանչյուր կոլտնտեսության, խորհտնտեսության և Մեք. Տրակտ. Կայանին կից: Անցկացնել գյուղական ակտիվի մասսայական վերապատրաստություն: Ծավալել մարտական աշխատանք՝ գյուղական կոմյերիտականների թեորետիկական մակարդակի բարձրացման և բոլոր կոմյերիտականների ագրո-տեխնիկական անգրագիտության լիկվիդացիայի վերաբերմամբ 1931 թվականին: Ապահովել գյուղում միության գծի ճիշտ գործադրությունը աճման բնագավառում, ամրապնդելով պրոլետարական միջուկը, զտելով աշխատանքի պրոցեսում խորթ և քայքայող տարրերից:

Պլենումը հանձնարարում է ՀԼԿՅԵՄ Անդրյերկկոմի Բյուրոյին և հանրապետությունների կոմյերիտ-



միության կենտրոնական կոմիտեներին՝ Կոլտնտկենտրոնների, Հողժողկոմների, բամբակի, թեյի և այլ տնտեսական կազմակերպությունների հետ միասին՝ ապահովել հանրապետական և ռայոնական մասշտաբով կուրսերի կազմակերպումը՝ կոմյերիտականներից տեղամասերի պետերի, բրիգադապետերի կուլտուր-կենցաղային աշխատանքների պատրաստության վերաբերմամբ:

Պլենումն անհրաժեշտ է գտնում 500 քաղաքային կոմյերիտականներ գյուղերը տեղափոխել աշխատանքի:

Պլենումն առանձնապես ընդգծում է գյուղական կազմակերպությունների վարին օղակների ղեկավարության հետագա ամրապնդման կարևորությունը կոմյերիտմիության ղեկավար օրգանների կողմից:

## IV.

Պլենումը նշում է, որ հաշվետվության ժամանակաշրջանում Անդրկովկասի կոմյերիտմիութենական կազմակերպությունները իրական օգնություն են ցույց տվել կուսակցությանը՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրաների զարգացման գործում (անգրագիտության վերացման, հանրուսուցման, կադրերի պատրաստության վերաբերյալ աշխատանք):

Անդրկովկասի կոմյերիտմիութենական կազմակերպությունները պետք է հանդիսանան՝ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրաների զարգացման ակտիվ մասնակիցները, «մղելով անհաշտ կռիվ դասակարգային թշնամու փորձերի դեմ՝ խափանելու ՍԽՄՀ ժողովուրդների ազգային-կուլտուրական շինարարությունը, փորձատելու նրանից պրոլետարական բովանդակությունը և մեկուսացնելու բուռն թափով աճող պրոլետարական կուլ-

տուրայի հաղորդակցումից և ազդեցությունից»: (IX համագումարի վճիռներից):

Հանրուսուցման բնագավառում անհրաժեշտ է, ամրապնդելով փորձական և քանակական նվաճումները, բարելավել հանրուսուցման վերաբերյալ վողջ աշխատանքը: Իրագործել հանրուսուցմամբ չափահասներին ընդգրկելու պլանը, ակտիվ մասնակցություն ցույց տալ շենքերի և դասագրքերի հայթայթման վերաբերյալ հարցերի լուծման մեջ: Կոմյերիտմիությունը, վոր հանդիսանում է պոլիտեխնիկացիայի առաջամարտիկը, պետք է այդ բնագավառում ծավալի մարտական աշխատանք, օգնե Լուսժողկոմի հետ մնացող օղակներին: Անհրաժեշտ է ապահովել բոլշևիկյան տեմպեր Ֆաբր. Գործ. Ուսմ. զարգացման մեջ, բարձրացնելով պատրաստության վորակը՝ համապատասխան սոցիալիստական արդյունագործության պահանջների: Հատուկ ուշադրություն դարձնել Ֆաբ. Գործ. Ուսմ. հիմնական շինարարության ծավալման վրա:

Պլենումն առանձնապես ընդգծում է Ֆաբ. Գործ. Ուսմ. մեջ հիմնական ազգությունների յերիտասարդության և հատկապես աղջկերանց ներգրավման խնդիրը:

Հավաստելով գյուղատնտեսական կադրերի պատրաստության բացահայտ անբավարար վիճակը, Պլենումը բոլորովին անբավարար է գտնում Լուսժողկոմների, Կոլտնտկենտրոնների, կոմյերիտմիութենական և մյուս կազմակերպությունների կողմից յեղած ղեկավարությունը:

Պլենումն առաջարկում է բոլոր կազմակերպություններին վճռական կռիվ մղել տեղի ունեցող օպորտունիստական թերագնահատման դեմ այդ բնագավառում և իրապես ապահովել բոլշևիկյան տեմպերը գյուղատնտեսական կադրերի պատրաստության գործում:



Պլենումը պարտավորեցնում է կոմյերիտմիության բոլոր կազմակերպություններին ուժեղացնել աշխատանքը գրական ճակատում, պրոլետարական գրողների ասոցիացիայի հետ մեկտեղ լայն ծավալելով հարվածայինների ներգրավումը գրականության մեջ, հիմնական ազգություններից պրոլետարական գրողներ սնուցանելու վերաբերյալ աշխատանքը:

Պլենումը հանձնարարում է ՀԼԿՅԵՄ Անդրյերկկոմի Բյուրոյին ապահովել պրոլետարական գրողների ասոցիացիայի հետ կապի ամրապնդումը և կոմյերիտմիութենական կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը Անդրկով. Պրոլետ. Գրողն. Ասոց. աշխատանքի վերակառուցման մեջ՝ այդ խնդրի իրագործման ուղղությամբ:

Պլենումն ընդգծում է կուլտուր-կենցաղային աշխատանքի ուժեղացման խնդրի հատուկ կարևորությունը: Ամենից առաջ կոմյերիտմիության կազմակերպությունները պետք է հասնեն արմատական բեկման կոմմունալ տնտեսության մեջ մասնակցելու վերաբերմամբ (բնակարանային շինարարություն, հասարակական սնունդ, եներգետիկական տնտեսություն, քաղաքային տրանսպորտ, ջրի մատակարարում, քաղաքների և շեների առողջապահական դրությունը և այլն):

Պլենումը նշում է կոմյերիտմիութենական կազմակերպությունների անբավարար աշխատանքը՝ կրոնի ազդեցության և հին կենցաղի մնացորդների դեմ մղվող կռվում:

«Պահպանելով առավելագույն չափի տակտ, ամեն կերպ վտարելով կրոնական նախապաշարումների և բացասական կենցաղային մնացորդների դեմ մղվող կռվի մեջ վարչական միջոցների կիրառման մեթոդները, կոմյերիտմիությունը պետք է մասսաների համոզման ու դաստիարակության մեթոդներով կատարի վճռական հարձակում կրոնի ազդեցության դեմ՝ ան-

ցյալում գոյություն ունեցող բացասական հակումներն արմատախիլ անելու համար։ Այդ ուղղությամբ՝ փարանջայից, չադրայից, փակ կյանքից կանանց ազատագրման համար մղվող կռիվը հանդիսանում է կարևորագույն խնդիրներից մեկը կոմյերիտմիության համար»։ (ՀԼԿՅԵՄ-ի 9-րդ համագումարի վճիռներից)։

## V.

Պլենումն անբավարար է գտնում Անդրկովկասի կոմյերիտմիութենական կազմակերպությունների աճման տեմպերը 1931 թվականի առաջին կիսամյակի ընթացքում։ Չնայած յերկրորդ կվարտալում տեղի ունեցած վորոշ առաջընթացումներին, կազմակերպության նշանակալից մասը՝ ՀԼԿՅԵՄ բազմամիլիոն կազմակերպություն դարձնելու մասին IX համագումարի կայացրած վճռից դեռ չի հանել անհրաժեշտ յեզրակացությունները։

Մի շարք կազմակերպություններում գոյություն ունի աջ-օպորտունիստական հուսադրանք ինքնահոսի վերաբերմամբ՝ աճման բնագավառում և մինչև օրս ծավալված չէ մարտական ամենօրյա աշխատանք համամիութենական յերիտասարդության շրջանում։ Կոմյերիտմիության մի քանի կոմիտեներ իրենց ղեկավարությամբ չեն ապահովել անհրաժեշտ վճռական բեկումն, շարունակում են անպատասխանատու վերաբերվել աճման հարցերին, աճման նկատմամբ տարվող իրենց վողջ աշխատանքի մեջ հույսը դնելով ինքնահոսի վրա։

Պլենումն ամբողջապես ու լիովին հավանություն է տալիս ՀԼԿՅԵՄ Անդրյերկկոմի Բյուրոյի մի շարք վորոշումներին, վորոնք ուղղել են մի շարք կազմակերպությունների (Թիֆլիս, Յերևան, Գանձակ, Քութայիս, Կասպիյ, Աբխազիա), ինչպես նաև «Մոլոդոյ Ռաբոչի» թերթի՝ աճման բնագավառում գործած «ձախ» սխալները, վորոնք յուր ժամանակին շտկվել են ՀԼԿՅԵՄ Անդրյերկկոմի Բյուրոյի կողմից։

Բայց և այնպես, Պլենումը հաստատում է, վոր ՀԼԿՅԵՄ Անդրյերկկոմի Բյուրոյի այդ վճիռներից հետո յել մի շարք կազմակերպություններում տեղի յեն ունեցել սահմանված վերահսկիչ թվերի որինականացումն աճման բնագավառում (Հայաստան, Սուրախանիի ռայոն, «Ավանգարդ» լրագիրը և այլն), վոր վկայում է, թե այդ կազմակերպությունները քաղաքական դաս չեն առել կոմյերիտմիության Յերկր. Կոմ. Բյուրոյի վորոշումներից։

Պլենումը պարտավորեցնում է կոմյերիտմիության բոլոր կազմակերպություններին մարտական կերպով մոբիլիզացիայի յենթարկել՝ աճման բնագավառում իրագործելու համար այն վճիռները, վոր դրել են՝ IX համագումարը, Միության Կենտկոմը և ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմը։

Պլենումը հաստատում է, վոր արդյունաբերական կենտրոններում և գյուղերի ռայոնական կենտրոններում քաղկրթությունը դրված է անբավարար, իսկ գյուղերի մեծ մասում քաղկրթությունը տապալված է։ Պլենումը պարտավորեցնում է բոլոր կազմակերպություններին մոտ ժամանակներս հասնել այնպիսի դրության, վորի ժամանակ թեորետիկական մակարդակի բարձրացման գործը հանդիսանար կարևորագույն մոմենտը կոմյերիտմիության յուրաքանչյուր կազմակերպության աշխատանքի մեջ։ Անհրաժեշտ է վճռականորեն խփել քաղկրթության վերաբերմամբ տեղի ունեցող աջ-օպորտունիստական թերագնահատմանը, հասցնել պատշաճ բարձրության քաղկրթության ղեկավարությունը, ստեղծել լայն պրոպագանդիստական կադրեր։

Հավաստելով ռազմական աշխատանքի և նրա ղեկավարության անբավարար վիճակը, Պլենումը հանձ-

նարարում է Ցերկ. Կոմիտեյին մոտ ժամանակներս ապահովել վճռական բեկում այդ աշխատանքի մեջ:

Պլենումը հանձնարարում է ՀԼԿՑԵՄ Անդրյերկկոմի Բյուրոյին ապահովել սահմանամերձ ռայոնների ղեկավարության բարելավումը:

VI.

Պլենումը նշելով պիոներ — կազմակերպությունների աճումն ու ամրապնդումը, պիոներների ակտիվ մասնակցությունը գարնանացանի մեջ, արդֆինպլանի համար մղվող կռվում, դրա հետ մեկտեղ հավաստում է, վոր պիոներ — կազմակերպությունների ողակների նշանակալից մասը չի մասնակցել սոցիալիստական շինարարության գործին:

Պիոներ — կազմակերպության աշխատանքի հիմնական բովանդակությունը պետք է լինի մասնակցությունը սոցիալիստական շինարարության մեջ, ջանալով, վոր սոցիալիստական շինարարության մեջ պիոներների ներգրավման ձևերն ու մեթոդները հասկանալի ու մատչելի լինեն յերեխաների մասսաներին:

Կոմյերիտմիութենական կազմակերպությունների կարևորագույն խնդիրը հանդիսանում է դպրոցների ու վաշտերի վերալրացման առաջիկա կիրառումը: Այդ ամենաբարդ խնդրի իրագործման համար անհրաժեշտ է, վոր բոլոր կազմակերպությունները համապատասխան կերպով պատրաստվեն:

Հավաստելով պիոներ — առաջնորդների սոցիալ — վորակական բոլորովին անհանդուրժելի դրությունը, Պլենումն անհրաժեշտ է գտնում սեպտեմբեր ամսվա ընթացքում վերաքննել պիոներ — առաջնորդների վողջ կազմը՝ նրա սոցիալական և վորակական բարելավման նպատակով:

VII.

Պլենումը նշում է վորոշ հաջողություններ միութենական ղեկավարության վերակառուցման գործում



(պլանականության սկզբնավորությունը, գործառնության տարրերը, կատարման կազմակերպված ստուգումները, կենդանի կապի վորակի բարելավումն և այլն), պարտավորեցնում է կոմյերիտմիության բոլոր կոմիտեներին ամենակարճ ժամկետում ապահովել՝ միութենական ղեկավարության հետագա վերակառուցման մասին ՀԼԿՑԵՄ Կենտկոմի յերկրորդ Պլենումի կայացրած վճիռների իրագործումը:

Նշելով վարին միութենական ակտիվի թույլ պատրաստությունը, Պլենումն առաջարկում է բոլոր կազմակերպություններին ապահովել՝ միութենական ակտիվի պատրաստության և վերապատրաստության մասին Անդրյերկկոմի Բյուրոյի վորոշման յուր ժամանակին իրագործումը:

Պլենումը նշում է, վոր մինչև այժմ էլ մի շարք ողակների աշխատանքի մեջ նկատվում են թափթփվածության և անկարգապահության տարրեր, բացակայում է աշխատանքի խիստ վերահսկողություն, մի բան, վոր թուլացնում է տեմպերը և վատացնում աշխատանքի վորակը: Պլենումը պարտավորեցնում է բոլոր կազմակերպություններին, ծավալուն բոլշևիկյան ինքնաքննադատության հիման վրա, վողջ աշխատանքի մեջ անխնա կռիվ մղել մանր-բուրժուական թափթփվածության դեմ՝ կարգապահության, կազմակերպվածության համար վողջ աշխատանքի մեջ, կատարման խիստ ստուգումն սահմանելու համար, վորոնք հանդիսանում են բոլշևիկյան տեմպերի ապահովման, աշխատանքի վորակի բարձրացման և կոմյերիտմիության անդամների մասսայի բոլշևիկյան դաստիարակության կարևորագույն մեթոդները:

Պլենումը հավաստում է, վոր իր աշխատանքի վերակառուցման հիման վրա «Մոլոդոյ Ռաբոչիյ» լրագիրը կդառնա կոմյերիտմիության Անդրկովկասի կազմակերպության մարտական որգանը: Հաշվետվության կարճ ժամանակաշրջանում «Մոլոդոյ Ռաբո-

5660-66

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР им. А. Мясникяна

չիյ»-ը հանդիսացավ կարևորագույն լծակը՝ կոմյերիտմիության Անդրյերկկոմի կողմից կոմյերիտմիութենական կազմակերպությունների ղեկավարումն իրականացնելու մեջ: Հիմնական թերությունը «Մոլոդոյ Ռաբոչիյ»-ի աշխատանքի մեջ հանդիսանում է կոմյերիտմիության գյուղական կազմակերպությունների աշխատանքի գործնական կողմի թույլ արտացոլումը:

Պլենումը պարտավորեցնում է «Մոլոդոյ Ռաբոչիյ»-ին և կոմյերիտմիության բոլոր կազմակերպություններին մոտ ժամանակներս ստեղծել գյուղական պատանի թղթակիցների լայն ցանց:

Պլենումը հանձնարարում է ՀԼԿՅԵՄ Անդրյերկկոմի Բյուրոյին մշակել «Մոլոդոյ Ռաբոչիյ»-ի՝ թուրքերեն, հայերեն և վրացերեն լեզուներով ներդրվող թերթերի կամ առանձին համարների հրատարակության հարցը:

---

## ԸՍՏ ԸՆԿ. ԳՐՈՒԲՄԱՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ՝ ԼԿՅԵՄ ԲԱԳՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹ.—ՀԿԿ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ, ՀԿԿ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ ՅԵՎ ՀԼԿՅԵՄ-Ի ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ—ՆԱՎԹԻ ՄԱՍԻՆ ԿԱՅԱՑՐԱԾ ՎՃԻՌՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒՐՋԸ

ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկոմի Պլենումը նշում է, որ նավթի հնգամյակի յերկու և կես տարում իրագործման մեջ կոմյերիտմիության Բագվի կազմակերպությունը խաղացել է մեծ դեր: Բագվի կազմակերպությունը, կուսակցության ղեկավարության ներքո, գլխավոր գծի գործադրության հիման վրա, վճռականորեն կռվելով աջ և «ձախ» օպորտունիստների ու հաշտվողականների դեմ, կարողացել է կազմակերպել ու գլխավորել բանվոր յերիտասարդության քաղաքական ու արտադրական ակտիվությունը և ձեռք բերել խոշոր հաջողություններ տնտեսական ճակատում:

Բագվի կազմակերպությունն այդ հաջողությունները կարողացել է ձեռք բերել ամենից առաջ շնորհիվ այն հանգամանքի, որ ընթացել է սոցիալիստական մրցակցության և հարվածայնության առաջին շարքերում, հիմնականում իրագործելով հարվածայնությամբ և սոցմրցակցությամբ կոմյերիտականների 100 տոկոսով ընդգրկման վերաբերյալ ՀԼԿՅԵՄ-ի IX համագումարի կայացրած վճիռը:

Ներգրավելով կոմյերիտականների մասսաներին և միությունից դուրս գտնվող յերիտասարդությանը հարվածային շարժման մեջ, կազմակերպելով հանդիպական արդֆինպլաններ, բուքսիրներ և այլն, կոմյե-

ինամիության Բաքվի կազմակերպությունը մեծ օգնություն է ցույց տվել կուսակցությանը՝ Ազնեֆթի արդֆինպլանի քանակական ու վորակական ցուցանիշների իրագործման և գերակատարման գործում:

ՀԼԿՑԵՄ Անդրերկկոմի Պլենումն առանձնապես նշում է կոմերիտմիութենական փորվող հանքահորերի աշխատանքը (վորոնք բարձրացել են մինչև 60-ի և ՀԼԿՑԵՄ Անդրերկկոմի Բյուրոյի վճռից հետո՝ մինչև 72-ի շահագործման համար 18 փորված հանքահորերի հանձնելու ժամանակ), վորոնք ցույց են տվել կռվի բոլշևիկյան տեմպեր՝ վորակական և քանակական ցուցանիշների համար (փորելու արագության ծրագրերի իրագործումը և գերակատարումը, կորության աստիճանների կրճատումը, փորված հանքահորերի հանձնումը շահագործման համար սահմանված ժամկետներից առաջ, անցումն վողջ Ազնեֆթի կոմերիտմիութենական փորողների նախաձեռնությամբ հինգից չորս մարդու, վորը տվել է փորելու ինքնարժեքի իջեցում 16 տոկոսով և կոմերիտմիութենական փորվող հանքահորերի անարտադրական ընդմիջումների կրճատում):

Կազմակերպված են հինգ կոմերիտմիութենական նավթահանքային տեղամասեր 45 բրիգադով՝ նավթի շահագործման համար: Կոմերիտական-հարվածայինները՝ խոր նասոսների վերաբերմամբ հանդիսացել են՝ չորսից յերեք մարդու, իսկ հետո յերեքից յերկուսի անցնելու առաջամարտիկներ, ավելացնելով շտանգների վայրեջքն ու վերելքը և իջեցնելով գնահատությունը (Լենինյան, Սուրախանիի, Բինագադիի ռայոնը և Բուխտում (ծովածոցում)):

Իրագործվում է ու գերակատարվում նավթի մշակման պլանի ծրագիրը և ավելանում է բենզինի ընտրանքի տոկոսը պոտենցիալից՝ համաձայն կոմերիտմիութենական տեղակայումների: Նոր-յուղ հանող յերիտասարդական գործարանը իրագործում է և



գերակատարում ծրագիրը հատուկ արտադրանքների մշակման վերաբերմամբ:

II.

Դրա հետ մեկտեղ ՀԼԿՑԵՄ-ի Անդրերկկոմի պլենումը գտնում է, վոր առաջին կիսամյակում Ազնեֆթի արտադրական ծրագրի թերակատարումը հանդիսանում է նույնպես հետևանք Ազնեֆթի՝ 1931 թվականի համար մշակված ծրագրի խնդիրների համեմատությամբ կոմերիտմիության տեղական կազմակերպությունների աշխատանքի անբավարար վերակառուցման:

Միաժամանակ Պլենումը նշում է, վոր ԱԼԿՑԵՄ-ի ԲԿ և ռայկոմները դեռ ևս չեն ապահովել մասսաների մարտական մոբիլիզացիան՝ ՀԼԿՑԵՄ-ի Անդրերկկոմի՝ 1931 թ. մայիսի 6-ին կայացրած մի շարք կարևորագույն վորոշումների իրագործման համար:

Պլենումը հավաստում է նույնպես ԱԼԿՑԵՄ-ի Կենտկոմի բոլորովին անբավարար ղեկավարությունն ու վերահսկողությունը ՀԼԿՑԵՄ-ի Անդրերկկոմի Բյուրոյի վորոշումն իրագործելու նկատմամբ:

Բաքվի կազմակերպությունը մինչև այժմ մասսաներին դեռ թույլ է մոբիլիզացիայի յենթարկել՝ ՀԼԿՑԵՄ-ի IX համագումարի կողմից դրված մի շարք վորակապես ավելի բարձր խնդիրների և ընկ. Ստալինի ճառի մեջ դրված նոր խնդիրների իրագործման համար (պլանավորումը, տեխնիկան, ռացիոնալիզացիան), չնայած կոմերիտմիութենական Անդրերկկոմի Բյուրոյի վորոշման մեջ այդ մասին արված նշումներին:

Անբավարար է ծավալված կռիվ՝ արտադրանքի բարձր վորակի համար, դժբախտ պատահարների և չեղումների դեմ:

Անբավարար են աշխատում կոմյերիտմիութենական կազմակերպությունները՝ Ադնեվթի բարելավման նկատմամբ (ավտոտրանսպորտ, նեղ յերկաթուղագիծ և այլն):

Թուրք յերիտասարդությունը թույլ է ներգրավվում նավթարդյունաբերության մեջ, առանձնապես նավթ զտիչ գործարաններում, նման ձեռնարկություններում, փորելու և շահագործման մեջ և թույլ է նրանց վորակյալ կադրերի պատրաստությունը:

Թույլ է ծավալված մասսայական, հատկապես կուլտուր-կենցաղային աշխատանքը և արտադրության մեջ նոր յեկած յերիտասարդության հետ տարվող աշխատանքը:

## III.

Հավանություն տալով ԱԼԿՅԵՄ-ի ԲԿ միջոցառումներին՝ կոմյերիտական փորվող հանքահորերի թիվը մեծացնելու վերաբերմամբ, ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի Պլենումը պատասխանատվություն է դնում կոմյերիտմիութենական կազմակերպությունների վրա վոչ միայն իրենց փորվող հանքահորերի պլանի իրագործման ու գերակատարման համար, այլ և իրենց տեղամասի ու հանքի պլանի իրագործման ու գերակատարման համար: Դրա համար կոմյերիտմիութենական փորվող հանքահորերը պետք է հասարակական բուքսիրի վերցնեն յետ մնացած փորողներին, տան իրենց աշխատանքի փորձը և կիրառեն պատրաստված կադրերի փոխադրությունը մյուս փորվող հանքահորերը: Սահմանել վերահսկողություն՝ նոր փորված հանքահորերը յուր ժամանակին շահագործման հանձնելու համար: Վճռական կռիվ մղել դժբախտ պատահարների վերացման, անցքերի կորության և փորումի անարտադրական ընդմիջումների առավելագույն կրճատման համար:



## IV.

Հավաստելով տուրբինային փորումի անբավարար վիճակը և կոմյերիտմիության Բագվի կազմակերպության անբավարար մասնակցությունը տուրբինային փորումի զարգացման մեջ, պլենումը, հավանություն տալով կոմյերիտմիության ԲԿ-ի գործադրած միջոցառումներին, հանձնարարում է ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի բյուրոյին ամենամոտ ժամանակում հատկապես քննության առնել տուրբինային փորումի կիրառման վերաբերմամբ ԱԼԿՅԵՄ-ի Բագվի կազմակերպության անելիքների հարցը:

## V.

Պարտավորեցնել ԱԼԿՅԵՄ-ի Կենտկոմին և Բագվ. Կոմիտեյին ամենակարճ ժամկետում իրենց ղեկավարությամբ ապահովել կոմյերիտականների ու յերիտասարդության մասնակցությունը հետախուզական փորումի մեջ, կազմակերպելով կռիվ՝ տեխնիկայի տիրապետման, հետախուզական փորումի համար, բարելավելով Ադնեվթի յերկրա-հետախուզական կազմակերպության հետ կապի պահպանումը և միասնական աշխատանքը:

## VI.

Կոմյերիտմիութենական կազմակերպությունների մարտական խնդիրը պետք է լինի Ադնեվթի հանքահորերի վերաբերմամբ արդյունաբերության մեջ տեղի ունեցող ընդմիջումների վերացումը մոտ ժամանակներս: Կոմյերիտմիութենական փորվող հանքահորերն ու տեղամասերը, իրագործելով և գերակատարելով իրենց պլանները, պետք է ձեռք բերեն վճռական բեկումն հետ մնացած նավթահանքերի աշ-

խատանքների մեջ՝ աշխատանքի կազմակերպման բարելավման միջոցով, դիմազրկության վերացման, ռացիոնալիզատորական միջոցառումների գործադրության, ուժերի ճիշտ դասավորման, տեխնիկական ղեկավարության բարելավման, յուր ժամանակին սարքավորումն ապահովելու, սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության ամրապնդման ու հետագա ծավալման միջոցով:

Ձեռք բերել բարելավումն շտանգների ու խողովակների վայրեջքի ու վերելքի վերաբերմամբ: Զարգացնելով և ամրապնդելով խոր նասոսների վրա աշխատող կոմյերիտմիութենական կազմակերպությունները, կազմակերպել նրանց աշխատանքի փորձի հանձնումը Ադնեֆթի բոլոր հանքահորերին: Կռվել մոտորների ռացիոնալաբար ոգտագործման համար, ապահովելով նյութերով առաջին հերթին փորված հորերը, որոնք տալիս են մեծ դեբետ: Լայն ծավալել աշխատանքը հին փորվածքներից ճնշիչ խողովակները հանելու վերաբերմամբ, կազմակերպելով մեկուսացման բաժիններին կից կոմյերիտմիութենական խմբեր

VII.

Պլենումն առաջարկում է ոժանդակ արհեստանոցների ու գործարանների բոլոր կոմյերիտմիութենական կազմակերպություններին՝ ապահովել պատվերների իրագործումը ժամանակին, արտադրության մեջ, աշխատանքի կազմակերպման բարելավման, ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի, լայն ռացիոնալիզատորական շարժման զարգացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցով, հասնելով բաց թողած սարքավորման որակի բարելավման, առանձնապես պտուտավոր տուրբինով փորումի համար:



VIII

Կոմյերիտմիության Բաքվի կազմակերպությունը պետք է առանձին հսկողության տակ առնի նյութերի պահեստների հոգատարությունը, սահմանի վերահսկողություն՝ յուր ժամանակին պատվերներն ստանալու և այդպիսիք ըստ պատկանելույն հանձնելու վերաբերմամբ, ամեն կերպ վերացնելով պատվերների ընկած մնալը պահեստներում:

IX.

Պլենումը հանձնարարում է ԱԼԿՅԵՄ-ի Կենտկոմին և Բաքվի Կոմիտեյին Ադնեֆթի հետ մեկտեղ մշակել կոնկրետ միջոցառումներ կոմյերիտմիության Բաքվի կազմակերպության՝ ՀԿԿ (բ) Անդրյերկկոմի պլենումի՝ Ռիկովի և Դերժինսկու անվան գործարանների վերակառուցման մասին կայացրած որոշումն իրագործելու մեջ:

X.

Մոբիլիզացիայի ենթարկել կոմյերիտմիութենական կազմակերպությունը՝ նավթի, մասնավորապես կոմյերիտմիութենական տեղակայումների վերաբերմամբ ծրագիրն իրագործելու և գերակատարելու համար: Կոմյերիտմիության վողջ կազմակերպության ուշադրության կենտրոնում դնել բաց թողնվող նավթարդյունքների որակի բարելավման խնդիրը, հատուկ ուշադրություն դարձնելով արտահանության պլանի որակական և քանակական ցուցանիշերի իրագործման վրա, կազմակերպելով նավթարդյունքների որակի վերաբերմամբ կոմյերիտմիութենական պահականոցներ ու խմբեր:

## XI.

Նշելով կոմյերիտմիության թույլ մասնակցությունը նոր նավթ զտիչ գործարանների կառուցման մեջ, առաջարկել ԱԼԿՅԵՄ-ի Կենտկոմին և Բաքվի Կոմիտեյին շինարարական կազմակերպությունների հետ միասին նշել նոր-կառուցումների աշխատանքի մեջ կոմյերիտմիության մասնակցության կոնկրետ պլանը (բանվորական ուժի հավաքը, ապահովումն վորակյալ ու տեխնիկական կադրերով, շինարարական նյութերով և այլն):

## XII.

Նավթարդյունաբերության համար կադրերի պատրաստության ու վերապատրաստության վիճակը համարելով անբավարար և նշելով կոմյերիտմիության անբավարար մասնակցությունը դրանում, ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի պլենումն առաջարկում է ԱԼԿՅԵՄ-ի Բաքվի Կոմիտեյին.

ա) Մղել վճռական հետևողական կռիվ Ֆաբ.-Գործուսացումը մոտ ժամանակներս վերածել վորակյալ բանվորական ուժի պատրաստության հիմնական ձևի ու պատրաստության վորակը համապատասխանեցնել զարգացող նավթարդյունաբերության պահանջներին. միևնույն ժամանակ միջոցներ ձեռք առնել՝ ուսուցման կարճ - ժամկետային ձևերի զարգացման նկատմամբ:

բ) Ապահովել ամբողջապես ու լիովին կուսակցության Անդրյերկկոմի պլենումի՝ աշնան հավաքի (набор) և Ֆաբգործուս. ԳՊՌԻ և ՇՌԽՄՊ դպրոցների հիմնական կառուցման վերաբերմամբ կայացրած վճռի իրագործումը:

գ) Հարց առաջադրել Ադնեֆթին՝ գոյություն ունեցող դպրոցների արհեստանոցներն ու հանրակացարանները ընդարձակելու մասին:



դ) Համաձայն նավթարդյունաբերության մեջ նորագույն առաջավոր տեխնիկայի վերակառուցման և արմատացման, Լուսժողկոմի և Ադնեֆթի հետ միասին, վերակառուցել Ֆաբ.-Գործուս. դպրոցների ծրագիրը, ավարտելով այդ աշխատանքը մինչև ուսումնական տարվա սկիզբը:

ե) Կազմակերպել յերիտասարդ բանվոր - հարվածայինների սիստեմատիկ առաջքաշում տնտեսական, տեխնիկական աշխատանքի համար, առանձնապես նախկին Ֆաբ-Գործուսավարտներից, վորոնք ավարտել են տեխնիկումները և բարձր կրթ. հաստատությունները (вузы), ոգնելով նրանց իրենց ամենորյա աշխատանքի մեջ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ցույց տալ ավելի ուշադրություն և հոգատարություն հին արտադրա-տեխնիկական ինտելլիգենցիայի ամենորյա պրակտիկայի մեջ:

Դրա հետ միասին Պլենումը հանձնարարում է ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի բյուրոյին մոտ ժամանակներս քննության առնել նավթարդյունաբերության համար տեխնիկական կադրերի պատրաստությունը վերաբերող հարցը և ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ:

զ) Բանվորական ուժի կազմակերպված հավաքի վերաբերմամբ Ադնեֆթի տնտեսական կազմակերպություններին ցույց տալ ոգնություն:

## XIII.

Հանձնարարել ԱԼԿՅԵՄ-ի Բաքվի Կոմիտեյին, տնտեսական - հաշվառքին (хозрасчет) անցած կոմյերիտմիութենական բրիգադների փորձի հիման վրա, ապահովել մոտ ժամանակներս կոմյերիտմիութենական բոլոր բրիգադների անցումը տնտեսական - հաշվարկին և կազմակերպել կոմյերիտականների ու յերիտասարդության ակտիվ մասնակցությունը Ադնեֆթի

բոլոր ձեռնարկություններն ու տնտեսական կազմակերպությունները տնտեսական-հաշվարկին փոխադրելու գործում։

## XIV.

Պարտավորեցնել ԱԼԿՅԵՄ-ի Բաքվի Կոմիտեյին ձեռք բերել վճռական բեկում՝ տեխնիկայի տիրապետման համար մղվող կռվի գործում հետևյալ միջոցներով.

ա) Բոլոր ձեռնարկություններում, արհեստանոցներում, գործարաններում — տեխնիկայի ուսումնասիրության վերաբերմամբ շրջանակների (кружок), դասընթացների, դպրոցների կազմակերպության միջոցով, նրանց աշխատանքը յենթարկելով արտադրական խնդիրներին։

Պլենումն առանձնապես մատնանշում է թուրքերեն լեզվով տեխնիկայի ուսումնասիրության համար շրջանակների, դասընթացների, դպրոցների լայն ցանց ստեղծելու անհրաժեշտությունը։

բ) Ծավալել տեխնիկայի մասսայական ուսումնասիրությունը ակումբներում, հանրակացարաններում, կազմակերպելով տեխնիկայի յերեկույթներ, դասախոսություններ, զրույցներ, տեղեկատու սեղաններ, խորհրդատվություններ։

գ) Ադրբ. ԺՏԳԽ-ի և Ադրբ. Գիտ. Հետախույզ. Ինստիտուտի հետ միասին տեխնիկական շրջանակներն ու դասընթացները ապահովել շենքով, տեխնիկական օժանդակումներով, ծրագրերով, մեթոդական օժանդակումներով և ղեկավարների կադրերով։

## XV.

Ամրապնդել յեղածը և ծավալել շարժումը նոր պլանային-գործառնական խմբեր ստեղծելու համար



բոլոր ձեռնարկություններում և պրոմիսլաներում, ուժեղացնելով նրանց աշխատանքի գործառնական ղեկավարությունը։

Պլանային-գործառնական խմբերի աշխատանքի բովանդակությունը ամենից առաջ պետք է լինի՝ մասնակցությունը պլաններ կազմելու մեջ, պլանները՝ մինչև պրոմիսլաները, փորողները, բրիգադները հասցնելը, հանդիպական պլանների կազմակերպումը, պլանի իրագործման ստուգումը, բանվորական ուժի դասավորումը և արտադրության աշխատանքի թերությունների վերաբերմամբ յուր ժամանակին ազդարարումը (сигнализация) կուսակցական և տնտեսական կազմակերպություններին։

## XVI

Պլենումը հանձնարարում է ԱԼԿՅԵՄ-ի Բաքվի Կոմիտեյին, ընկ. Ստալինի ճառի մեջ յեղած մատնանշումների հիման վրա, ծավալել կռիվը՝ բանվորական ուժը արտադրությանն ամրապնդելու համար՝ հավասարանքի (уравниловка) վերացման, աշխատավարձի ճիշտ կազմակերպման միջոցով, առաջ քաշելով անորակ բանվորներին վորակյալ և նվազ վորակյալներին ավելի վորակյալ աշխատանքի մեջ, կռվելով բանվորների և բանվոր յերիտասարդության բնակարանային պայմանների հետագա բարվոքման համար։

## XVII

Կոմյերիտմիության Բաքվի կազմակերպության կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանում է՝ բարձրացած պահանջների համեմատ՝ մասնակցությունը Ադնեֆթի տնտեսական կազմակերպությունների աշխատանքի հետագա վերակառուցման մեջ։

Կոմյերիտմիութենական կազմակերպությունները, ՀԿԿ(բ) Անդրյերկկոմի պլենումի վորոշման

հիման վրա, պետք է ծավալեն կռիվ՝ տնտեսական — հաշվարկի իրական գործադրության, տեխնիկական կադրերի ճիշտ դասավորման ու յերիտասարդ տեխնիկական ուժերը ղեկավարության մեջ քաշելու համար, ղեկավարության մեթոդների բարելավման և Ազնեվթի տնտեսական կազմակերպությունների բոլոր օղակների վորակի համար, վճռականորեն կռվելով տնտեսական ապարատի մեջ գոյություն ունեցող բյուրոկրատիզմի տարրերի դեմ:

Կուսակցության ղեկավարության ներքո, կուսակցության գլխավոր գծի հիման վրա կազմակերպելով մասսաներին՝ Ազնեվթի արտադրական ծըրագրի իրագործման ու գերակատարման համար, վճռականորեն կռվելով աջ ոպորտունիզմի, վորպես գլխավոր վտանգի դեմ, «ձախերի» և հաշտվողականության դեմ, ամրապնդելով ու զարգացնելով սոցմրցակցությունն ու հարվածայնությունը նավթարդյունաբերության բոլոր ճյուղերում, մերկացնելով, բոլշևիկյան ինքնաքննադատության հիման վրա, թերություններն ու թերակատարումներն աշխատանքի մեջ, կոմյերիտմիության Բաքվի կազմակերպությունը ձեռք կբերի նոր վճռական հաղթանակներ սոցիալիստական շինարարության ճակատի տնտեսական և այլ տեղամասերում:

---

# ԸՍՏ ԸՆԿ. ԴԱԼԱԿԻՇՎԻԼՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ՝ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՀԼԿՅԵՄ-Ի ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

## I

ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի պլենումը հավաստում է, վոր Անդրկովկասի ռայոնների մեծ մասը (Վրաստանում — Բաշկիչեթի, Բորչալուի, Ղարայազի, Կասպիի և ուրիշներ. Հայաստանում — Վաղարշապատի, Ղուրդուղուլիի և ուրիշներ. Ադրբեջանում — գրեթե բոլոր ռայոնները) փաստորեն չեն դիմել իրացնելու՝ գյուղական կոմյերիտականների քաղաքագրագիտության լիկվիդացիայի վերաբերմամբ ՀԼԿՅԵՄ-ի IX համագումարի վճիռները:

Կոմյերիտմիության մի շարք կոմիտեներ չեն ծավալել վճռական կռիվ՝ գյուղական կոմյերիտականների քաղաքագրագիտության մասին ՀԼԿՅԵՄ-ի IX համագումարի, Կենտկոմի և Անդրյերկկոմի կայացրած վճիռների գործադրության վերաբերմամբ՝ գոյություն ունեցող աջ ոպորտունիստական տրամադրությունների դեմ:

Պլենումը՝ ՀԼԿՅԵՄ-ի IX համագումարի կարևորագույն վճռի բացահայտ թերագնահատման համար հանդիմանություն է հայտարարում ռայկոմների քարտուղարներին Բաշկիչեթի՝ ընկ. Ծատիևին, Կասպիի՝ ընկ. Խուցիշվիլուն, Ղարայազի՝ ընկ.

Աղխմովին, Բորչալուի՝ ընկ. Զալիլովին, Վաղարշապատի՝ ընկ. Գեվորգյանին, Շամխորի՝ ընկ. Հարությունովին, Ալի-Բայրամի՝ ընկ. Զամանովին, Լենքորանի՝ ընկ. Ֆարաջիևին:

Իսկ այն ռայոններում, վորտեղ ծավալվել է աշխատանք գյուղական կոմերիտականների քաղաքական անգրագիտության լիկվիդացիայի վերաբերմամբ, ՀԼԿՅԵՄ-ի Անդրերկկոմի պլենումը նշում է ուսուցման ցածր վորակը՝ շնորհիվ պրոպագանդիստների անբավարար քաղաքական պատրաստության, շրջանակներին (кружок) հայթայթվող գրականության չափազանց հապաղման և սոցիալիստական շինարարության պրակտիկայից քաղաքական ուսուցման կտրվածության:

Նույնպես և Պլենումը նշում է հանրապետությունների մարզկոմների, կենտկոմների և ՀԼԿՅԵՄ-ի Անդրերկկոմի վոչ բավարարաչափ ճկուն գործառնական ղեկավարությունը:

Գյուղական կոմերիտականների քաղաքական անգրագիտության լիկվիդացիայի գործում անհապաղ բեկումն ստեղծելու համար պարտավորեցուցիչ պայմանը հանդիսանում են. պարզաբանումն կոմերիտականների լայն մասսաներին և միությունից դուրս գտնվող երիտասարդությանը թեորետիկական մակարդակի բարձրացման կարևորագույն նշանակությունը կոմերիտմիության դասակարգային անվտանգության ամրապնդման և բարձրացման, պրոպագանդիստների պատրաստված կադրերով քաղմինիմումի շրջանակների ցանցի ապահովման գործում, յուր ժամանակին գործադրումը և գրականության հայթայթումը, կոմերիտմիության բջիջների ու կոմիտեների սիստեմատիկ գործառնական ու մեթոդական ղեկավարությունը և քաղանգրագիտության վերացման գործի փոխադրումը սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության ռելսերի վրա:



## II

Պլենումը պարտավորեցնում է Անդրկովկասի բոլոր կոմերիտմիութենական կազմակերպություններին՝ 20 օրվա ժամկետում, օգոստոսի 20-ից, կազմակերպել՝ կոմերիտականների և միությունից դուրս գտնվող երիտասարդության՝ քաղմինիմումի ավարտման կարևորագույն նշանակության շուրջը լայն պրոպագանդա: Բացատրական աշխատանքի պրոցեսում անհրաժեշտ է գործնականացնել կոմերիտմիության բջիջների բաց ժողովները, ռադիոհաղորդիչը և այլ միջոցներ, լուսաբանելով մամուլի մեջ 20-օրյակի ընթացքը: Հանձնարարել ՀԼԿՅԵՄ-ի Անդրյեկկոմի Բյուրոյին սեպտեմբերի սկզբներին կազմակերպել քսանօրյակի հանրագումարների վերաբերմամբ անդրկովկասյան ռադիո-փոխանցում և հեռակա (заочный) կոնֆերենցիա «Молодой Рабочий»-ի, «Ахалгазрда коммунисти»-ի, «Гяндж-Ишчи»-ի և «Авангард»-ի էջերում:

## III

Պարտավորեցնել ՀԼԿՅԵՄ-ի Անդրերկկոմին, կենտկոմին, կոմերիտմիության մարզկոմներին ու ռայկոմներին ձեռք բերել վճռական բեկումն քաղմինիմումի կիրառման ղեկավարության պրակտիկայի մեջ, ապահովելով խիստ վերահսկողություն կոմերիտմիության բջիջների աշխատանքի վրա և նրանց՝ ցույց տրվելիք ամենօրյա գործնական օգնությունը:

Առաջարկել հանրապետությունների կոմերիտմիության կենտկոմներին՝ կազմակերպել բոլոր գյուղական ռայկոմներին կից հատուկ պրոպագանդիստական բրիգադներ, վորոնց վրա դնել քաղմինիմումի շրջանակների ղեկավարների մեթոդական ղեկավարությունը (ղեկավարների խորհրդակ-

ցությունների սիստեմատիկ հրավերը, հրահանգավորումը տեղում և այլն)։

Բոլոր բջիջներում ջոկել քաղուսուցման կազմակերպիչներ քաղաքականապես ավելի պատրաստված կոմյերիտականներից, դնելով նրանց վրա պատասխանատվություն՝ քաղուսուցման կազմակերպման համար, իրագործելով ամենօրյա հսկողությունը նրանց աշխատանքի վրա։

## IV

Հանձնարարել հանրապետությունների կոմյերիտմիության Կենտրոնական կոմիտեներին՝ կազմակերպել բոլոր ռայկոմներին կից 20-օրյա դասընթացներ յերկու ժամկետով՝ գյուղական պրոպագանդիստների մասսայական վերապատրաստության համար, մասնավորապես ապահովելով պրոպագանդիստական կադրերի պատրաստությունը՝ ռայոնական ազգային փոքրամասնությունների համար, և քաղաքային կազմակերպություններից ու գյուղի ռայոնական կենտրոններից փոխադրել 100-ական ակտիվիստներ (ամեն մի հանրապետության մեջ)՝ օգնելու կոմյերիտմիության գյուղական կազմակերպություններին՝ անցկացնելու քաղգրագիտության մոբիլիզացիան յեռամսյա ժամանակամիջոցում։ Աբխազիայի, Աջարիայի, Հարավային Օսեթիայի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի կոմյերիտմիության մարզկոմները պետք է մոբիլիզացիայի յենթարկեն 30-ական ակտիվիստներ 3 ամիս ժամանակով։

Կազմակերպել կոմյերիտմիության կենտկոմներին և մարզկոմներին կից 10-օրյա դասընթացներ՝ մոբիլիզացիայի յենթարկված պրոպագանդիստների պատրաստության համար։ Տեղափոխումն ավարտել մինչև սեպտեմբերի 20-ը։



ՀՀ Ազգային գրադարան
NL0189152

կուսակցության և կոմյերիտմիության բոլոր ընթացիկ հարցերի վերաբերմամբ ապահովել մեթոդական ցուցմունքների հայթայթումը քաղմինիմումի շրջանակների ղեկավարներին։

## V.

Հավանություն տալով քաղմինիմումի շրջանակների համար տեղական լեզվով հրատարակության վերաբերմամբ Վրաստանի կոմյերիտմիության Կենտրոնական Կոմիտեյի միջոցառումներին և ՀԼԿՅԵՄ-ի Կենտկոմի իր ժամանակին բրոշյուրներ տեղափոխելուն, պլենումն առաջարկում է՝ ԱԼԿՅԵՄ-ի և Հայաստ. ԼԿՅԵՄ-ի Կենտկոմին՝ ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ թարգմանելու քաղմինիմումին վերաբերող ՀԼԿՅԵՄ-ի Կենտկոմի բրոշյուրները ազգային լեզուներով, մասնավորապես ապահովել տեղական լեզուներով թարգմանված գրականության փոխադրումը ազգային փոքրամասնությունների ռայոնները։ Հանձնարարել ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի բյուրոյին ապահովել տեղական նշանակություն ունեցող գրականության հրատարակությունը յերկամսյա ժամանակամիջոցում։

## VI.

Հատուկ ուշադրություն պետք է կենտրոնացվի կոմյերիտմիության մեջ բոլոր նոր ընդունվածներին քաղկրթությամբ ընդգրկելու վրա, ինչպես նաև անկուսակցական, կոլտնտեսային, բատրակ - չքավոր, միջակ յերիտասարդության քաղկրթությամբ ընդգրկելու վրա։

## VII.

Գյուղական կոմյերիտականների քաղգրագիտության մոբիլիզացիայի ծավալման գործում անհրա-

I 4401

ժեշտ է լայն չափով օգտագործել սոցմրցակցության և հարվածայնության մեթոդները, նույնպես և գործնականացնել քաղ-վիճակախաղը, քաղ-մրցումները՝ հրջանակների բջիջների ու ռայոնների մեջ:

## VIII.

ՀԼԿՑԵՄ-ի Անդրյերկկոմի պլենումը հանձնարարում է ՀԼԿՑԵՄ-ի Անդրյերկկոմի Բյուրոյին՝ հարց հարուցանել ՀԿԿ(բ) Անդրյերկկոմի առջև կուսղեկավարության, նյութական օգնության և կուսակցական կադրերից պրոպագանդիստներ հատկացնելու մասին՝ գյուղական կոմյերիտականների քաղանգրագիտության լիկվիդացիայի համար:

## IX.

Անդրկովկասի առանձին կազմակերպությունների մեջ տարվող աշխատանքի փորձը փոխանակելու նպատակով պարտավորեցնել «Молодой Рабочий», «Гяндж-Ишчи», «Ахалгазрда Коммунисти» և «Авангард» լրագրներին պարբերաբար կազմակերպել պրոպագանդիստների հեռակա կոնֆերենցիաներ և սիստեմատիկորեն լուսաբանել առանձին հրջանակների, բջիջների, ռայկոմների, մարզերի հանրապետությունների՝ գյուղական կոմյերիտականների քաղանգրագիտության լիկվիդացիայի վերաբերմամբ տարվող աշխատանքը:

---

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
ՊԵՏ ԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ